

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1/22
ՏՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ՝ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ՆԻՍՏԻ

ՏՀԻ հունվարի 2020թ.

քաղաք Երևան

2020 թվականի հունվարի 29-ին, ժամը 15.00-ին տեղի ունեցավ ՏՀայաստանի ազգային ագրարային համալսարան՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստը: Հոգաբարձուների խորհրդի 27 անդամներից նիստին մասնակցում էին հետևյալ 20-ը.

1. Խաչատուր Աբաջյան – Խորհրդի անդամ,
2. Վիկտոր Աբրահամյան – Խորհրդի անդամ,
3. Թոռնիկ Ալիյան – Խորհրդի անդամ,
4. Տիգրան Գալստյան – Խորհրդի անդամ,
5. Աշոտ Գիլոյան – Խորհրդի անդամ,
6. Գուրգեն Եղիազարյան – Խորհրդի անդամ,
7. Սերգեյ Երիցյան – Խորհրդի անդամ,
8. Վոլոդյա Էլբակյան – Խորհրդի անդամ,
9. Սարգիս Խանդանյան – Խորհրդի անդամ,
10. Աղավարդ Խաչատրյան – Խորհրդի անդամ,
11. Արեգ Խոջոյան – Խորհրդի անդամ,
12. Քրիստինե Խուրշուդյան – Խորհրդի անդամ,
13. Արմեն Հարությունյան – Խորհրդի նախագահ,
14. Արմինե Հովհաննիսյան – Խորհրդի անդամ,
15. Կարեն Ղարախանյան – Խորհրդի քարտուղար,
16. Իրինա Ղափլանյան – Խորհրդի անդամ,
17. Գոհար Մամիկոնյան – Խորհրդի անդամ,
18. Արփինե Մկրտչյան – Խորհրդի անդամ,
19. Գագիկ Սարգսյան – Խորհրդի անդամ,
20. Նունե Սիմոնյան – Խորհրդի անդամ:

Նիստը նախագահող՝ ՏՀայաստանի ազգային ագրարային համալսարան՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Ա. Հարությունյանը ներկայացրեց նիստի օրակարգը և առաջարկեց տալ կարծիք: Օրակարգի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան: Քվեարկությամբ միաձայն հաստատվեց նիստի հետևյալ օրակարգը.

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2019 թվականի գործունեության հաշվետվության և 2020 թվականի բյուջեի նախահաշվի նախագծի քննարկում և հաստատում,
2. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2020 թվականի կառուցվածքի և հաստիքացուցակի քննարկում և հաստատում,
3. Ընթացիկ հարցեր:
 - 3.1 «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2020-2024թթ. ռազմավարական պլանի նախագծի քննարկում:
 - 3.2 Ֆրոնթենիա ծրագրի ներկայացում:

3.3 «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ստորաբաժանումների և մասնաճյուղի տնօրենների ընտրության նոր կարգի հաստատում:

3.4 «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի սեփականության իրավունքով պատկանող խոշոր եղջերավոր կենդանիների՝ վաճառքի եղանակով օտարման կարգի հաստատում:

Օրակարգում ընդգրկված բոլոր հարցերի վերաբերյալ նյութերը նախապես տրամադրվել էին ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամներին:

Բացման խոսքով հանդես եկավ հոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Հարությունյանը, ով քննարկան դրեց օրակարգի առաջին հարցը:

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2019 թվականի գործունեության հաշվետվության և 2020 թվականի բյուջեի նախահաշվի նախագծի քննարկման և հաստատման հարցի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ ՀԱԱՀ ռեկտոր Վարդան Ուռուտյանը:

ՀԱԱՀ ռեկտոր Վարդան Ուռուտյանը հանգամանորեն ներկայացրեց համալսարանի 2019 թվականի ուսումնական, գիտական և ֆինանսատնտեսական գործունեությունը՝ մանրամասնորեն հիմնավորելով հաշվետվության մեջ տեղ գտած թվական տվյալները:

Հարցի շուրջ արտահայտվեցին Արմեն Հարությունյանը, Գագիկ Սարգսյանը, Տիգրան Գալստյանը, Գոհար Մամիկոնյանը, Վիկտոր Աբրահամյանը, Իրինա Ղափլանյանը: Արտահայտվողները բարձր գնահատական տվեցին Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 2019 թվականին կատարված բարեփոխումներին, ինչպես ուսումնական գործընթացի կազմակերպման, այնպես էլ գիտական և ֆինանսատնտեսական ոլորտներում:

Բաց քվեարկության դրվեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2019 թվականի գործունեության հաշվետվության և 2020 թվականի բյուջեի նախահաշվի նախագծի քննարկման և հաստատման հարցը: Քվեարկությանը մասնակցեցին խորհրդի 20 անդամներ: Ձայները բաշխվեցին հետևյալ համամասնությամբ՝

Կողմ՝ 20,

Դեմ՝ 0,

Ձեռնպահ՝ 0:

Խորհուրդը որոշեց հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2019 թվականի գործունեության հաշվետվությունը և հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2020 թվականի բյուջեի նախահաշիվը ըստ ներկայացված նախագծի:

Օրակարգի 2-րդ՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2020 թվականի կառուցվածքի և հաստիքացուցակի փոփոխությունների քննարկման և հաստատման հարցի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ ռեկտոր Վարդան Ուռուտյանը:

Բաց քվեարկության դրվեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2020 թվականի կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատման հարցը: Քվեարկությանը մասնակցեցին խորհրդի 20 անդամներ: Ձայները բաշխվեցին հետևյալ համամասնությամբ՝

Կողմ՝ 20,

Դեմ՝ 0,

Ձեռնպահ՝ 0:

Խորհուրդը որոշեց հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2020 թվականի կառուցվածքի և հաստիքացուցակի փոփոխությունները ըստ ներկայացված նախագծի:

Ընթացիկ 3.1 հարցը վերաբերվում էր «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2020-2024թթ. ռազմավարական պլանի նախագծին: Ռեկտոր Վարդան Ուռուտյանը հանգամանորեն ներկայացրեց համալսարանի 2020-2024թթ. ռազմավարական պլանի նախագիծը:

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Հարությունյանն առաջարկեց, որ խորհրդի անդամները մեկ ամիս ժամկետում առաջարկություններ ներկայացնեն ռազմավարական պլանի նախագծի վերաբերյալ:

Ընթացիկ 3.2-րդ հարցը վերաբերվում էր ICARE հիմնադրամի հետ համատեղ իրականացվելիք Ֆրութենիա նախագծին, որի շնորհիվ արդիականացվելու են ագրոնոմիական առարկաները, ներդրվելու են դասավանդման նոր մեթոդներ, Ոսկեհատի տնտեսությունում հիմնվելու է ինտենսիվ պտղատու այգի և այլն: Նախագծի հիմնական ֆինանսավորողը Ավստրիական զարգացման գործակալությունն է: Հետաքրքիր նախագծերից է Ոսկեհատի տնտեսությունում նորարարական փորձացուցադրական այգու հիմնումը՝ մշակության տեխնոլոգիաների ցուցադրման նպատակով: Նախագիծն իրականացվելու է ՀՀ-ում Արգենտինայի դեսպանության, Արգենտինայի գյուղատնտեսական տեխնոլոգիաների ազգային ինստիտուտի աջակցությամբ և Հայկական բարեգործական ընդհանուր միության ֆինանսավորմամբ:

Հարցի շուրջ արտահայտվեցին Գագիկ Սարգսյանը, Արմեն Հարությունյանը:

Խորհուրդը ի գիտություն ընդունեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի մասնակցությունը Ֆրութենիա ծրագրին և հավանության արժանացրեց այն:

Ընթացիկ 3.3-րդ հարցը վերաբերվում էր «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ստորաբաժանումների և մասնաճյուղի տնօրենների ընտրության նոր կարգի հաստատմանը: Ընտրության կարգը հանգամանորեն ներկայացրեց իրավախորհրդատու Նարեկ Եղիազարյանը:

Հարցի շուրջ արտահայտվեց Գոհար Մամիկոնյանը:

Բաց քվեարկության դրվեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ստորաբաժանումների և մասնաճյուղի տնօրենների ընտրության կարգի հաստատման հարցը: Քվեարկությանը մասնակցեցին խորհրդի 20 անդամներ: Ձայները բաշխվեցին հետևյալ համամասնությամբ՝

Կողմ՝ 20,

Դեմ՝ 0,

Ձեռնպահ՝ 0:

Խորհուրդը, նիստին մասնակցած անդամների միաձայնությամբ, որոշեց հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ստորաբաժանումների և մասնաճյուղի տնօրենների ընտրության կարգը և ընտրության օր նշանակել մարտի 20-ը:

Ընթացիկ 3.4-րդ հարցը վերաբերվում էր «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի սեփականության իրավունքով պատկանող խոշոր եղջերավոր կենդանիների՝ վաճառքի եղանակով օտարման կարգի հաստատմանը:

Հարցի շուրջ արտահայտվեցին Վիկտոր Աբրահամյանը, Արմեն Հարությունյանը:

Բաց քվեարկության դրվեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի սեփականության իրավունքով պատկանող խոշոր եղջերավոր կենդանիների՝ վաճառքի եղանակով օտարման կարգի հաստատման հարցը: Քվեարկությանը մասնակցեցին խորհրդի 20 անդամներ: Ձայները բաշխվեցին հետևյալ համամասնությամբ՝

Կողմ՝ 20,

Դեմ՝ 0,

Ձեռնպահ՝ 0:

Խորհուրդը, նիստին մասնակցած անդամների միաձայնությամբ, որոշեց հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի սեփականության իրավունքով պատկանող խոշոր եղջերավոր կենդանիների՝ վաճառքի եղանակով օտարման կարգի հարցը:

Օրակարգի հարցերը սպառվեցին, հոգաբարձուների խորհրդի նիստը հայտարարվեց փակված: